ԿԻՐՈՎԱԿԱՆՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ[1]

Սամվել Մկրտչյան

Խորհրդային սկզբնական փուլում կիրովականցիների շրջանում արմատապես փոխվեցին ավանդական տոների տարածման մասշտաբները, որոնք կապված էին պետական քաղաքականության հետ: Արդյունքում այդ տոների անկմանը զուգընթաց կենցաղ ներթափանցեցին խորհրդային և միջազգային հեղափոխական բնույթի տոները: Տվյալ շրջանն առանձնանում էր ընդգծված հակակրոնական քաղաքականությամբ, որի գլխավոր թիրախը եկեղեցական տոներն ու ծեսերն էին: Այդ քաղաքականության կազմակերպիչները հիմնականում հանրապետական և մասնավորապես՝ Ղարաքիլիսայի տեղական «Անաստված» կազմակերպություններն էին: Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան փուլերում, չնայած պետական մերժողականությանը, կենցաղում նկատվում է ուխտագնացությունների և մատաղների որոշակի վերարթնացում, որը պայմանավորված էր պատերազմական շատ ծանր իրավիճակով: Ռազմաճակատ մեկնած մարտիկի ճակատագիրը դարձավ մտերիմների մտահոգության գլխավոր խնդիրը: Թիկունքում մնացածների և հատկապես կանանց մեջ վերարթնացան ավանդական ծեսերը: Ուխտերով և մատաղներով կիրովականցիները սգում էին զոհվածներին և աղոթում ռազմաճակատում գտնվող հարազատների և անհետ կորածների համար: Այդ երևույթը բնորոշ էր նաև Լոռու մյուս բնակավայրերին: 1970-1980-ականն թթ. Կիրովականում նկատվում է ավանդական տոների “վերականգնման» որոշակի միտում: Այդ տոները հատուկ սցենարներով կազմակերպված մարզա-երաժշտական միջոցառումներ և թատերականացված ներկայացումներ էին, որոնց նախաձեռնողները, իսկ հաճախ նաև կատարողները պետական հաստատություններն էին: Այս առումով հատկապես առանձնանում էին Համբարձման և Վարդավառի տոները: Ի հայտ եկան նաև նոր տոներ (Երգի տոն, Լոռվա ձմեռ, Ձն-

---

[1] *Հետազոտությունիրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

ծաղկի տոն), որոնք կապված էին Լոռու գեղատեսիլ բնաշխարհի հետ: Խորհրդային վերջին փուլում ավանդական տոները գրեթե անկում էին ապրել (բացառությամբ Զատկի), և հիմնականում գերակայում էին խորհրդային տոները, որոնք գրեթե ամբողջությամբ առկա էին պետական տոնացույցում: 1980 թ. իրականացրած էթնոսոցիոլոգիական հետազոտություններն ամբողջությամբ արտացոլում են կիրովականցիների տոնական վարքագիծն ըստ սեռային, տարիքային և կրթական հատկանիշների:

Սույն հետազոտության նպատակը Մեծ Ղարաքիլիսա-Կիրովականի[1]

---

[1] *Ղարաքիլիսայի անվան մասին ժողովրդական ավանդությունը վկայում է. թուրք փաշան իր բանակով մտնում է քաղաք, ավերում և զորքը տեղավորում եկեղեցում՝ գիշերելու, իսկ ինքը մի քանի զորականների հետ տեղավորվում գյուղի մեծահարուստների տներում: Ասում են՝ հայ երիտասարդները, որ մինչ այդ պատսպարվել էին սարերում, այդ գիշեր իջնում են և կոտորում թուրքերին: Առավոտյան փաշան, տեսնելով իր զորքի կոտորվելը, սարսափահար բացականչում է. "Ղարա քիլիսա (այսինքն՝ սև եկեղեցի), որ սևացրիր իմ բանակը»:* Ըստ այդմ, *բնակավայրը կոչվել է **Ղարաքիլիսա**՝ Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու անունով:*

Իրականում, Մեծ Ղարաքիլիսա-Կիրովականի տարածքը բնակեցված է եղել վաղնջական շրջանում: *Նոր քարի դարի (նեոլիթ) վերջերին և բրոնզի դարում (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կես-3-րդ հազարամյակի 1-ին կես) Փամբակ գետի աջ և ձախ ափերին հիմնվել են մի քանի երկրագործական և անասնապահական բնակավայրեր (ներկայիս Տավրոս թաղամասից մինչև Գուգարք գյուղը՝ ընդգրկելով Դիմաց թաղամասն ամբողջովին):* Այդ տարածքում գտնվող *Վաղ երկրագործական բնակավայրերից առավել նշանավոր են Թագավորանիստը, ինչպես նաև "Մաշտոցի բլուրը» և "Քոսի-ճոթերը», որոնք վաղ բրոնզեդարյան բնակատեղիներ են: Այստեղ քիչ չեն նաև վաղ միջնադարյան պատմական հուշարձանները:*

Առաջին գրավոր տեղեկությունը Մեծ Ղարաքիլիսայի մասին մեզ է ավանդել սանահինցի Սահակ քահանան, որն իր ավետարանում արձանագրել է 1654-1713 թթ. վերաբերող տեղեկություններ: 18-րդ դարավերջին և՛ Արարատյան դաշտի, և՛ Հայաստանի այլ վայրերի բնակչությունը տեսնում էր, որ Ղարաքիլիսան ու նրա շրջակա բնակավայրերն առավել անվտանգ են, այդ իսկ պատճառով ներգաղթել են նաև Մեծ Ղարաքիլիսա (եկել են Ղարաբաղից, Գանձակից, Երևանից, Քանաքեռից, Էջմիածնից, Եղվարդից, Շիրակից, Սյունիքից, Խոյից և այլն): 1801 թ. Լոռին անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, և 1828-ին այդ տարածքում հիմնվեց քաղաքային նոր բնակավայր՝ որպես 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ռուսական զորքերի տեղակայման գլխավոր կենտրոն: Ըստ Խաչատուր Աբովյանի՝ տեղի բնակչությունը չի գերազանցել 600-ը, որոնք մեծ մասամբ գաղթել են Երևանից: *1873 թ. այն ուներ 2017*

տոնական համակարգի վերլուծությունն է խորհրդային ժամանակաշրջանում:

Այդ բնակչության տոնածիսական վարքագիծը, մասնակի առանձնահատկություններով հանդերձ, գրեթե ամբողջությամբ արտացոլում էր Լոռու մշակույթը:

Կիրովականն ուներ քաղաքային մշակույթին բնորոշ հատկանիշներ, որոնք դրսևորվել էր նրա բնակչության տոնական վարքագծում: Այստեղ մեծ ներդրում ունեն նաև Լոռու մերձակա գյուղական բնակավայրերը և Պատմական Հայաստանի այլ վայրերից (Արցախ, Կարս, Կարին, Արդահան և այլն) միգրացիոն գործընթացները, որոնք անմիջական դեր են ունեցել քաղաքի ժողովրդագրական և կենցաղամշակութային դիմագծի ձևավորման գործում:

Ընդհուպ 20-րդ դարի սկզբները լոռեցիների կենցաղում տարածված էին հայոց ավանդական գրեթե բոլոր տոները, որոնք, համահայկական ընդհանրություններով հանդերձ, ունեին տեղական առանձնահատկություններ: Խոսքը վերաբերում է հետևյալ տոներին. Նոր տարի-Տարե-

---

մարդ, իսկ 1914 թ.՝ շուրջ 5000: 1849 թ. քաղաքը ներառվել է Ռուսական կայսրության Երևանի նահանգի կազմում: *1828 -1829 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվում է Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով, որի արդյունքում Էրզրումից, Կարսից, Արդահանից, Վանից Ղարաքիլիսա փոխադրվեցին հազարավոր հայեր: Այդ ժամանակաշրջանում մեծաթիվ հայեր էին տեղափոխվել նաև Տավուշից, Վրաստանից և նույնիսկ Կ. Պոլսից: Այդուհանդերձ, ըստ Սուրբ Աստվածածին եկեղեցու ավագ քահանա Տեր Խորեն* Մսլյանի *"Մուրճ»* ամսագրում *տպագրած հոդվածի՝ Ղարաքիլիսայի բնակչության մի* մասը *բնիկ* է: *Մեծ Ղարաքիլիսայի սոցիալ-տնտեսական կյանքում կարևոր նշանակություն ունեցավ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու կառուցումը, որն ավարտվեց 1899 թ.: 1902 թ. ավարտվեց Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի շինարարությունը: Այդ բնակավայրը կապվեց ինչպես Այսրկովկասի, այնպես էլ Ռուսաստանի քաղաքների հետ:* 1918թ. մայիսի 28-ին Ղարաքիլիսան, ինչպես և ողջ Լոռին անցել են Անդրկովկասյան Սեյմից անկախացած Հայաստանի Հանրապետությանը: Վերջինիս խորհրդայնացումից (1920 թ.) հետո, 1936-ին, ԽՍՀՄ իշխանությունները քաղաքն անվանափոխում են ի պատիվ հեղափոխական գործիչ **Սերգեյ Կիրովի**՝ այն կոչելով **Կիրովական (**տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, Հին ու նոր ավանդույթներ, Նոյյան Տապան հրատ., Երևան, 2012, էջ 12, 20, 24, 25, 26, 31, 32, 34, 35, 44, 45, 46 /488 էջ/: Կիրովական, Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979, էջ 462-464):

մուտ1, Քրիստոսի Ծնունդ և Մկրտություն2, Սուրբ Սարգիս3, Տեառնընդառաջ4, Բարեկենդան5, Մեծ պաս6, Զարչարանց շաբաթ7, պասեր8, Ծաղկազարդ9, Զատիկ10, Համբարձում11, Վարդավառ12, Սուրբ Աստվածածնի վերափոխում13, Խաչվերաց14, ուխտագնացություն, մատաղ1

---

1 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Նշանավոր տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 237-238, 384 էջ:

2 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Նշանավոր տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 237-241:

3 **Եր. Լալայան,** նշվ. աշխ., էջ 242:

4 **Եր. Լալայան,** նշվ. աշխ., էջ 244:

5 **Եր. Լալայան,** նշվ. աշխ., էջ 242:

6 **Եր. Լալայան,** նշվ. աշխ., էջ 243-244:

7 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Նշանավոր տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 245-246:

8 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Ավելորդ պասեր և տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 220:

9 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Ավելորդ պասեր և տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 244-245:

10 **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Նշանավոր տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 246-248:

11 Նշվ., աշխ., էջ 248-249:

12 Նշվ., աշխ., էջ 249:

Գյուղացիների մեծ մասը Վարդավառն անց է կացնում սարվորների հետ: Տղաները, հարսներն ու աղջիկները, տնից կամ շուկայից գնած մթերքն ու միրգը վերցրած, Վարդավառի կիրակիի վաղ առավոտյան ձիերով կամ ոտքով բարձրանում են սար՝ դեպի իրենց վրանները (տե՛ս **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 68):

13 Նշվ., աշխ., էջ 249:

14 "Սուրբ խեչի /Սբխեչի/ պասն ըլում էր սեպտեմբերի 6-ին. էս օրը գնում ին գերեզմանատուն, իրենց թազա մեռելին տեսակցության: Գնում ին հարազատներով, բարեկամներով: Սա տխրության օր էր: Շատերը եզ կամ կով ին մորթում, որ մինը հերիքի» (տե՛ս **Վ. Ղազարյան**, Ղարաքիլիսա գավառի Բոզիգեղ գյուղի (այժմ՝ Գուգարքի շրջանի Մարգահովիտ գյուղ) ազգագրություն, ըստ պրոֆ. Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի», 1981թ., Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 4/110, թղթ. 62, էջ 365-366: Լոռվա գավառի Թումանյանի (նախկին Ալավերդու) շրջանի Չկալով գյուղի ազգագրական նյութեր, 1975 թ., Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս 3, էջ 263:

և այլն: Այս առումով արժեքավոր են մասնավորապես Ե. Լալայանի[2] ուսումնասիրությունները, որոնք ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Վերջինս կարևորում ենք, քանի որ այն հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմել Լոռու[3] ավանդական տոնածիսական համակարգի մաս կազմող Մեծ Ղարաքիլիսա-Կիրովականի վերաբերյալ:

***

Լոռեցիների ավանդական տոնածիսական համալիրը նախ և առաջ կարևորում ենք գիտաճանաչողական տեսանկյունից: Ճիշտ է, Լոռվա տոների վերաբերյալ առ այսօր առկա են ազգագրական որոշակի դիտարկումներ, սակայն Ղարաքիլիսա-Կիրովականի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ գրեթե չկան:

Այդուհանդերձ, շատ ենք կարևորում մինչ այժմ եղած նյութը, որը հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմել լոռեցիների ավանդական տոների տարածման մասշտաբների ու կենցաղային դրսևորումների վերաբերյալ: Պատահական չէ, որ հենց այդ հիմքի վրա էլ փորձել ենք վերլուծել տոնական համակարգի փոփոխման միտումները խորհրդային փուլում՝ այն պայմանավորող սոցիալ-մշակութային և պետական-քաղաքական գործոններով:

Ղարաքիլիսա-Կիրովականում սեպտեմբերը համարվում էր Խաչվերացի ամիս: Այսօր էլ այն ընկալվում է որպես նախնիների հիշատակման միամսյակ, որը նաև ենթադրում է հարսանեկան արարողությունների արգելման ժամանակաշրջան: Ուշագրավ է, որ, ի տարբերություն կիրովականցիների կամ լոռեցիների, առ այսօր հայաստանցիների մեծ մասի համար մայիսն է համարվում հարսանիքների արգելված ամիսը (*մայիս-վայիս)*:

[1] **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Ուխտագնացություն, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ “Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 220-221: Ս. Մկրտչյան, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 134:

[2] **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Նշանավոր տոներ, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ “Գիտություն» հրատ., Երևան, 2004, 384 էջ:

[3] Լոռեցիների տոնածիսական մշակույթի վերաբերյալ բավականին արժեքավոր են Վ. Ղազարյանի հետազոտությունները, որոնք ընդգրկում են գյուղական տարբեր բնակավայրեր (տե՛ս **Վ. Ղազարյան**, Ղարաքիլիսա գավառի Բոզիգեղ (այժմ՝ Մարգահովիտ), Դսեղ, Թումանյանի (նախկին Ալավերդու) շրջանի Չկալով, Լոռու գավառի Վարդաբլուր, Ձորագյուղ, Օձունի գավառակի Ղալաղան, Ծաթեր, Մղարթ և Կարմիր Աղեգի գյուղերի ազգագրությունը:

Այս առումով հատուկ ուշադրություն ենք դարձրել խորհրդային շրջանին (1920-1980-ական թթ.), որի հատկապես սկզբնական փուլն (1920-1930 թթ) առանձնանում է ավանդական տոների դեմ պետական մերժողական քաղաքականությամբ:

Խորհրդային վերջին շրջանը բնութագրվում է ոչ ակտիվ հակակրոնական քաղաքականությամբ: Սակայն, դեռևս ակնառու էին խորհրդային աթեիստական քաղաքականության հետևանքները՝ կենցաղում հատակորեն նկատվում էին ավանդական տոների անկման և խորհրդային տոների աճի հակընթաց միտումներ: Վերջինս հիմնականում պայմանավորված էր խորհրդային քաղաքականությամբ և մասնավորապես ազգային-կրոնական ավանդույթները ժխտող կրթական դաստիարակությամբ:

Խորհրդային սկզբնական շրջանում Կիրովականում որակապես փոխվեցին ավանդական տոների տարածման մասշտաբները, որոնք կապված էին պետական ուղղորդված քաղաքականության հետ: Արդյունքում, ավանդական տոների անկմանը զուգընթաց, աստիճանաբար կենցաղ ներթափանցեցին խորհրդային և միջազգային-հեղափոխական տոները, որի տիպիկ օրինակներից է մայիսմեկյան տոնը[1]:

Տվյալ շրջանն առանձնանում էր հակակրոնական քաղաքականու-

---

[1] “Մայիսի 1-ը ամբողջ աշխարհի աշխատավորների համերաշխության տոնն է: 1920 թ. մայիսի 1-ը հատկապես հիշարժան է Լոռու բնակիչների համար: Մայիսի 1-ի նախօրյակին Ադրբեջանում արդեն հաստատվել էր Սովետական իշխանություն: Դա չտեսնված վերելք էր առաջացրել Լոռիում: Մոտենում էր նոր կյանքի առավոտը նաև Հայաստանի բանվորների և գյուղացիների համար: Լոռու համարյա բոլոր գյուղերում մայիսմեկյան միտինգները և ցույցերն անցան “Կորչի՛ դաշնակցական կառավարությունը, Կեցցե՛ սովետական իշխանությունը» լոզունգներով: Հիշում եմ մեր գյուղում՝ Պուշկինոյում տեղի ունեցավ ցույց, որին մասնակցեցին նախկին ճակատայինները, չքավոր գյուղացիները: Միտինգից հետո մենք կարմիր դրոշներով անցանք գյուղի միջով, երգում էինք ռևոլյուցիոն երգեր: Բայց թշնամին քնած չէր: Նա ամեն ինչ անում էր խանգարելու աշխատանքի տոնը: Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայից հետո սովետական ժողովուրդը Մայիսի 1-ը սկսեց տոնել ազատ պայմաններում, որպես աշխարհի աշխատավորության համերաշխության օր: Ու չես կարող հպարտություն չզգալ բոլշևիկյան պարտիայի համար, որին ես զինվորագրվել եմ 1918 թվականից»: **Պ. Դրյուկով,** Հին կոմունիստ (տե՛ս Չեմ կարող չհպարտանալ, Փարոս, Կիրովական, 1963, N 7, մայիսի 1, էջ 2):

թյամբ, որի գլխավոր թիրախը եկեղեցական տոներն էին: Այդ քաղաքականության կազմակերպիչները հանրապետական և Ղարաքիլիսայի տեղական «Անաստված» կամ ՄԱՄ[1] կազմակերպություններն էին: Վերջիններիս գործունեությունն, ըստ էության, անարդյունավետ էր, որը պայմանավորված էր դեռևս պահպանված տոնա ավանդույթներով: Խոսքը վերաբերում է ՄԱՄ-ի գործունեությանն ինչպես Ղարաքիլիսայում[2], այնպես էլ Լոռվա[3] և հանրապետության այլ բնակավայրերում[4]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան շրջանում նկատվում է ավանդական ծեսերի որոշակի վերարթնացում, որը պայմանավորված էր պատերազմական ծանր իրավիճակով: Այդ երևույթը բնորոշ էր Լոռու գրեթե բոլոր բնակավայրերին, այդ թվում՝ Ղարաքիլիսա-Կիրովականին[5]: Ինչ վերաբերում է խորհրդային տոներին, ապա դրանք ունեին միտինգային բնույթ, իսկ նախկինում գերակայող աթեիստական խնդիրները տեղի էին տվել պատերազմական հիմնահարցերին: Այդ տոները ռազմական սխրագործությունների փառաբանման ու զոհվածների հիշատակի մեծարման միջոցառումներ էին[6]:

Սակայն նույնիսկ այդ պայմաններում պետությունը հատուկ ուշադրություն էր դարձնում պետական գլխավոր ռազմաքաղաքական բնույթի տոներին ու միջոցառումներին և մասնավորապես խորհրդային բանա-

---

1 ՄԱՄ- Մարտնչող անաստվածների միություն:

2 **Վ. Թադևոսյան**, Մի Յեռանդուն շրջխորհրդի դեմքը /Ղարաքիլիսա/, Անաստված, Պետհրատի տպարան, Երևան, 1931, N 7-8, էջ 12: Նորից Ղարաքիլիսայի ՄԱՄ-ի շրջխորհրդի մասին, Անաստված, Երևան,1932, N 5-6, էջ 21, Հարվածային թղթակից՝ Վարդան:

3 **Հ. Մուրադյան**, Ուժեղացնել հակակրոնական աշխատանքը, Անաստված, Երևան, 1931, N 7-8, էջ 16:

4 Մարտնչող անաստվածների թիվն ամբողջ Հայաստանում հասել է արդեն 40 000-ի, որոնք ամեն օր հսկայական կուլտուրական պահանջներ են առաջադրում ՄԱՄ-ի Կենտրոնական Խորհրդին (տե՛ս **Մանկունի**, Խորհրդային Հայաստանի տասնամյակը, Եջմիածինն ու դաշնակցությունը, Անաստված, Երևան, 1930, 10-11, էջ 5-7:

5 **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 70:

6 **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 189:

կին1, կանանց միջազգային օրվան (Մարտի 8)2 և այլն:

1970-ականների վերջերին և 1980-ականների սկզբներին Հայաստանում նկատվում էին ավանդական տոների "վերականգնման» միտումներ: Այդ գործում որոշակի նախաձեռնություն էր ցուցաբերում պետությունը: Սակայն վերջինիս հակակրոնական ուղղվածության պատճառով գլխավոր ուշադրությունը դարձվում էր այն տոներին, որոնք համեմատաբար "քիչ էին քրիստոնեացված», և կրոնի կամ եկեղեցու հետ առնչությունը թույլ էր: Տվյալ չափանիշներին հիմնականում համապատասխանում էին Համբարձումը[3], Վարդավառը[4] և Վարդանանցը[5]: "Վերականգնված» այդ տոները հատուկ սցենարներով կազմակերպված մարզա-երաժշտական միջոցառումներ և թատերականացված ներկայացումներ էին, որոնց նախաձեռնողները, իսկ շատ հաճախ՝ նաև կատարողները պետական հաստատություններն էին: Դրանք պետության կողմից ա-

---

[1] Կարմիր բանակի 24-րդ տարեդարձին նվիրված սոցիալիստական մրցությունը ամեն օր նոր ծավալ է ստանում մարտիկների մեջ (տե՛ս **Մ. Հովասյան,** Կարմիր բանակի 24-րդ տարեդարձը, Կարմիր զինվոր, Երևան, Ղարաքիլիսա, 1942, N 883, հունվարի 20, էջ 1): Նվիրված է Կարմիր բանակի 24-րդ տարեդարձին: Ստուգվեց մարտիկերի շարային պատրաստվածությունը (տե՛ս Շնորհակալություն ստացան, Կարմիր զինվոր, Երևան, Ղարաքիլիսա, 1942, N 900, մարտի 1, էջ 1):

[2] Կանանց Միջազգային Կոմունիստական օրը, Մարտի 8-ը՝ ամբողջ ԽՍՀՄ-ում անցնում է բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցության, նրա կենտկոմի լենինյան ղեկավարությամբ, ընկ. Ստալինի գլխավորությամբ ձեռք բերված մեծագույն հաղթանակների պայմաններում: ՄԱՄ-ի Հայաստանի Կենտխորհուրդը առաջարկում է իր բոլոր շրջխորհրդներին և բջիջներին ակտիվ մասնակցել այդ օրվա անցկացմանը հետևյալ կերպ.

- Կանանց մեջ իրականացված կազմակերպչական աշխատանքի ստուգատես:
- Հայկոմկուսի Կենտկոմի 1931թ. սեպտեմբերյան որոշումների կենսագործման ստուգատեսը, թե որ չափով նրանք իրականացվել են բանվոր-աշխատավոր կանանց մեջ:
- ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունը և աշխատավոր կանանց մասնակցությունը "Մարտնչող Անաստված» սուզանավի կառուցման գործում (տե՛ս Մարտի 8-ը, Անաստված, Երևան, 1932, N 4, էջ 7-8):

[3] Ջանգյուլում, ՀՄԿԺ (Հայաստանի մշակութային կյանքի ժամանակագրություն), Երևան, 1985, օգոստոս, էջ 5: Ջանգյուլում, ՀՄԿԺ, Երևան, 1986, օգոստոս, էջ 5: **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 194, 196:

[4] Վարդավառ, ՀՄԿԺ, Երևան, 1985, հունիս-հուլիս:

[5] Հայրենիքի ձայն, Երևան, 30 մայիսի, 1984:

վանդական տոները վերադարձնելու և դրանով իսկ բնակչությանն էթնիկ ավանդույթներին հաղորդակից դարձնելու առաջին փորձերն էին: Խորհրդային տոնական համակարգը կարիք ուներ նմանօրինակ ավանդական ծեսերի, որոնք իրենց յուրատեսակ ազգային կոլորիտով հնարավորություն էին տալիս ընդգրկել հանդիսատեսների լայն շրջանակ: Նման տոնախմբությունների նկատմամբ խորհրդային պետության աջակցությունը ինքնանպատակ չէր, քանի որ այստեղ գործում էր «ազգային ձև և սոցիալիստական բովանդակություն» գաղափարական մոդելը, ուր գերակա դերը հատկացվում էր ազգային տոնի սոցիալիստական բնույթին: Այնուամենայնիվ, տվյալ փուլում ավանդական տոների նկատմամբ պետական ուշադրությունն ու աջակցությունը, չնայած որոշակի վերապահումներին, դրական երևույթ էր: Այն սերունդների համար կարևոր դեր խաղաց թե՛ ճանաչողական, թե՛ ազգային արժեքներով դաստիարակության առումով:

Ուշագրավ է, որ համահայաստանյան այս երևույթն ակնառու էր Կիրովականում: Այստեղ “վերականգնված» ավանդական տոներից հատկապես առանձնանում էին Համբարձում-Ջանգյուլումը և Վարդավառը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ- ՋԱՆԳՅՈՒԼՈՒՄ

Համբարձում-Ջանգյուլում տոնի ավանդույթը որոշվեց վերակենդանացնել 1967-1968թթ.1: Եվ ամռանը կարի ֆաբրիկայի երիտասարդները հավաքվեցին Վանաձորի նշանավոր Բոլոր քարի մոտ: Ձորը թնդաց երգից, երաժշտությունից, աշխույժ կատակից, ուրախ վիճակահանությունից: Աղջիկները սարերը ելան, ծաղկեփնջեր կապեցին, զուգվեցին պսակներով: Համբարձման տոնը նոր շունչ առավ: Հաջորդ տարիներին Ջանգյուլումին մասնակցում էր ողջ քաղաքը: Նոր տոնին նոր երգ էր անհրաժեշտ, և այն նույնպես ծնվեց: Բառերը գրեց ավանդույթը վերականգնողը՝ Գալուստ Գալստյանը, երաժշտությունը՝ ուսուցիչ Սերժիկ Ամիրբեկյանը:

---

[1] Մեծ լոռեցին՝ Հովի. Թումանյանը գրել է.
Համբարձումն եկավ, ծաղկունքն ալվան
Ջուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով (տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, էջ 442):

Գարնան բույրը աշխարհն անցել ու փռվել է Վանաձորում,
Ջեփյուռի հետ սկսվում է բացվել արփին Բոլոր քարում,
Դեռ նոր բացվող արեգակին սիրտն է պարզել կանաչ կաղնին
Եվ անհամբեր աչքը հառել քաղաք իջնող ճանապարհին:

Առաջին հայացքից թվում է, թե ոչինչ չի փոխվել այս տոնի բովանդակության մեջ. ազգային տարազներ հագած ծաղկեպսակներով աղջիկներ, ավանդական երգեր, շուրջպարեր, վիճակահանություն: Սակայն այլ բովանդակություն ու հնչողություն ունեն այդ երգերը, ու վիճակ հանող աղջիկը ոչ մեկին "չար բախտ» չի գուշակում, կատակ մի քառյակ է կարդում կամ ջերմ բարեմաղթություն: Ապա սկսվում են զանգվածային պարերն ու երգերը, ազգային խաղերը: Առանձին պատվի են արժանանում նրանք, ովքեր մեծ հաջողությունների են հասել աշխատանքում: Նրանց հանձնվում են հուշանվերներ, յուրաքանչյուրի պատվին կատարվում է որևէ երգ կամ պար: Ֆաբրիկայի աշխատողներն այստեղ էին ամփոփում իրենց աշխատանքի արդյունքները, շնորհավորում առաջավորներին, նրանց հանձնում պատվոգրեր, փոխանցիկ դրոշներ, հուշանվերներ: "Ջանգյուլում»-ն սկսվում էր վաղ առավոտյան և շարունակվում մինչև ուշ երեկո: Այն մեծ մասսայականություն էր վայելում կիրովականցիների շրջանում1:

ՎԱՐԴԱՎԱՌ

Ամռան ամենազվարթ տոնն է: Հեթանոսական ավանդույթն այստեղ ևս նոր բովանդակություն և իմաստ է ստացել: Վանաձորցիների համար "Վարդավառը» հիմա ավելի շատ ջրային մարզաձևերի տոնահանդես է, ուժի, ճարպկության, ուրախ հնարամտության ստուգատես: Լողի, նավարկության, ջրագնդակի, ջրացատկի մրցասպարեզն արհեստական լճերն էին, որոնցից, ցավոք, այսօր միայն մեկն է գործում2:

***

Խորհրդային վերջին շրջանում ստեղծվեցին նաև նոր տոներ, որոնք առաջին հայացքից թվում են հայկական-ավանդական, սակայն դրանցում էթնիկ տարրերը սակավ էին (լավագույն դեպքում՝ ժողովրդական

---

1 Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, էջ 442-443:

2 Նշվ. աշխ., էջ 446:

կամ ազգագրական համույթների երգեր, պարեր, ազգային տարազ, մարզական մրցույթներ, Լոռու գեղատեսիլ բնաշխարհ և այլն): Այդ նոր տոներից որոշները ժամկետային առումով համընկնում էին նաև խորհրդային-պետական առանձին տոներին (օրինակ՝ Ձնծաղկի տոնը՝ Մարտի 8-ին): Այս առումով խոսքը վերաբերում է Երգի, Լոռվա ծմեռ և Ձնծաղկի տոներին:

ԵՐԳԻ ՏՈՆ

Կիրովականում ամենամասսայականը Երգի տոնն էր, որն առաջին անգամ անցկացվեց 1955թ.Նապոլեոն Քալաշյանի և Լևոն Սարգսյանի նախաձեռնությամբ: Բազմահազարանոց մանկական երգչախմբի հնչյունները տարածվեցին ամենուրեք, արձագանք տվեցին քաղաքում: Երգում էր մի ամբողջ քաղաք՝ լցված իսկական երաժշտության բերկրանքով: Հայաստանում առաջին անգամ կազմակերպված նման տոնը միանգամից դարձավ ժողովրդի սեփականությունը, մտավ կիրովականցիների կենցաղ: Ամեն տարի սեպտեմբեր ամսվա հանգստյան օրերից մեկը նվիրվում էր երգին ու երաժշտությանը: Ծաղիկներով ու կանաչ ճյուղերով պարուրված հարթակի վրա իրար էին փոխարինում մշակույթի օջախների, հիմնարկ-ձեռնարկությունների ինքնագործ խմբերը, Երևանից, այլ քաղաքներից հրավիրված պրոֆեսիոնալ կոլեկտիվները: Մեկը մյուսի ետևից բեմահարթակ էին բարձրանում, իրենց արվեստը ցուցադրում ասմունքողները, երգիչները, երաժիշտները, պարողները: Բայց ամենակարևորը մասսայական երգերի կատարումն էր: Ամիսներ առաջ մարդիկ սովորում էին տոնի ժամանակ կատարվելիք երգերը, որ հետո գան, միանան, դառնան մի հսկա, բազմահազարանոց երգչախումբ, փառաբանեն իրենց հայրենիքը, աշխատանքը, սերը, լավն ու բարին: Երկար տարիներ կիրովականցիների երգչախումբը ղեկավարում էր քաղաքի գլխավոր դիրիժորը՝ հանրապետության ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդուարդ Կզարթմյանը, որը մեծ աշխատանք է կատարել երգչախմբային արվեստի զարգացման գործում: Երգի տոների հետ կիրովականցիները շատ հուշեր ունեն կապված: Դրանց մասնակից են եղել բազմաթիվ նշանավոր կոմպոզիտորներ: Սոճիների պուրակում են առաջին անգամ հնչել նոր երգեր, գործիքային ստեղծագործություններ, այս տոնի միջոցով են մարդիկ հաղորդակից եղել շատ պրոֆեսիոնալ կոլեկտիվների ոգեշունչ արվեստին: Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ է աշ-

նանային այն օրը, երբ Լևոն Մադոյանը սրինգով նվագեց իր հանրահայտ “Սոխակը», և անտառի բոլոր կողմերից բեմահարթակ հավաքվեցին թռչունները՝ ունկնդրելու այդ զարմանալի երաժշտությունը: Վերջին տարիներին, երբ սոճիների պուրակում սկսվեց պիոներների պալատի շինարարությունը, ավանդական երգի տոներն անց էին կացվում քաղաքային մարզադաշտում: Տոնը երգի, երաժշտության պրոպագանդման, երգչախմբային արվեստի զարգացման հիանալի միջոց է: Պատահական չէ, որ հիմա նման տոներ են անցկացվում հանրապետության շատ քաղաքներում ու շրջաններում1:

ԼՈՌՎԱ ՁՄԵՌ

Լոռվա ձմեռը (կազմակերպչներ՝ ՀԼԿԵՄ քաղկոմ և քաղխորհրդի գործկոմի ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտե)՝ հանրապետությունում ձմեռային մարզական առաջին տոնահանդեսն էր: Թեժ լեռան ստորոտից է սկիզբ առնում Վանաձոր-Դիլիջան ավտոխճուղու հարավային մասում սփռված Մարգավետի հովիտը: Հենց այստեղ էլ ամեն տարվա հունվար-փետրվար ամիսներին ձյան ճերմակահյուս ծածկոցի վրա է անցկացվում այդ յուրօրինակ մարզահանդեսը: “Լոռվա ձմեռն» իր «ծննդականն» ստացավ 1967թ. և հրաշք-երեխայի նման մեծացավ միանգամից՝ դառնալով կիրովականցիների սիրված տոնահանդեսներից մեկը: Ցրտաշունչ ձմեռն առատ ձյուն, մաքուր օդ, կայտառ տրամադրություն է նվիրում բոլոր նրանց, ովքեր գալիս են այստեղ անցկացնելու իրենց հանգիստը: Մարզահանդեսի ծրագրի մեջ են մտնում ձմեռային սպորտի համարյա բոլոր ձևերը: Տոնի յուրաքանչյուր մասնակից կարող է դուրս գալ դահուկային մրցման, սահնակով ցած սահել թեք լանջից, պարան ձգել, ձնագնդով հարվածել հեռավոր թիրախին: Իսկ հետո նրանց համար ելույթ են ունենում գեղարվեստական ինքնագործ խմբերը, երաժիշտները, ասմունքողները: Մարզահանդեսի մասնակիցները տուն են վերադառնում ուշ երեկոյան՝ բարձր տրամադրությամբ: “Լոռվա ձմեռը» գեղեցկության և ուժի մարզահանդես էր, որը մի ամիս անց էստաֆետը հանձնում էր «Ձնծաղկին»:

---

[1] Նշվ. աշխ., էջ 443-444:

ՁՆԾԱՂԿԻ ՏՈՆ

Տոնի վայրը դարձյալ Մարգավետի հովիտն էր, օրը՝ մարտի 8-ը: Ա-ռիթը կանանց միջազգային օրն էր, գարնան սպասումով ներծծված, ա-մենուրեք շռայլ, բերկրալից հույզը հաստատող տրամադրությունը: Հենց մութն իջնում էր հովտում, տասնյակ տեղերում բոցավառվում էին հսկա խարույկներ, լույսի և ստվերի հեքիաթային պար ուրվանկարում ձյան վրա: Հնչում էր զուռնան, և սկսվում էին մրցումները, խաղերը, վիճակա-հանությունները, գեղարվեստական խմբերի ելույթները: Հաղթողներն ի-բրև նվեր առաջին ձնծաղիկների փնջեր էին ստանում: «Ձնծաղիկը» հրաժեշտ է ձմռանը, գարունն ու արևը ողջունող տոն: Եվ ի՞նչ գարուն, ի-՞նչ ամառ և արև՝ առանց ծաղիկների: Այսպես մտածեցին կիրովականցի-ները և հիմնադրեցին ևս մի տոն, այս անգամ՝ նվիրված ծաղիկներին1:

***

Ըստ կիրովականյան մամուլի, 1940-1970 թթ. առավել շրջանառվում էին խորհրդային տոները՝ հիմնականում նվիրված Հոկտեմբերյան հեղա-փոխությանը2, Լենինյան թեմաներին3, կոմունիստական կուսակցությա-նը4 և ռազմա-հեղափոխական այլ իրադարձություններին (խորհրդային կարգերի հաստատման օր, Սովետական Հրետանու օր, Աֆրիկայի օր և այլն)5: Պետք է նշել, որ այստեղ առկա էին տոներ, որոնք կենցաղում աստիճանաբար ձեռք էին բերել նորովի դրսևորումներ: Խոսքը, նախ և

---

1 Նշվ. աշխ., էջ 444-446:

2 Մեծ Հոկտեմբերի նախօրյակին, Կարմիր զինվոր, Երևան, Կիրովական, 1947, N 124, հոկտեմբերի 11, էջ 1: Մեծ Հոկտեմբերի 30-ամյակի նախօրյակին, Կարմիր զինվոր, Երևան, Ղարաքիլիսա, 1947, N 127, հոկտեմբերի 24, էջ 2: ՀԱՄԿԲՊ ԿԵՆՏԿՈՄԻ կո-չերը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեվոլյուցիայի 30-րդ տարեդարձի առ-թիվ, Կարմիր զինվոր, Երևան, Կիրովական, 1947, N 132, նոյեմբերի 4, էջ 1-2: Հոկտեմ-բերի 38-րդ տարեդարձը, Կարմիր զինվոր, Ղարաքիլիսա, 1955, էջ 1:

3 Լենինյան թեմաներ, Կարմիր զինվոր, Կիրովական, 1956, Լենինյան դեկրետի 45 ա-մյակը, Փարոս, Կիրովական, 1963:

4 Դեպի ՍՄԿՊ-ի 60-ամյակը, Փարոս, Կիրովական, 1963, էջ 2:

5 Սովետական Ուկրաինայի երեսուն տարին, Կարմիր զինվոր, Երևան, Կիրովական, 1947, N 151, դեկտեմբերի 24): Այսօր Սովետական հրետանու օրն է, Կարմիր զինվոր, Երևան, Կիրովական, 1947, N 138, նոյեմբերի 23, էջ 1-2: Այսօր Աֆրիկայի օրն է, Փա-րոս, Կիրովական, 1963, N 96, դեկտեմբերի 1, էջ 3:

առաջ, վերաբերում է Նոր տարուն[1], Աշխատավորների օրվան[2] (Մայիսի 1) և այլն, որոնք կենցաղային նոր դրսևորումներով հանդերձ, առավելապես ունեն հեղափոխական բովանդակություն, ուր մեծ մասամբ գովերգվում էր խորհրդային պետության նվաճումները, այդ թվում՝ տիեզերքում:

Չնայած մասնակի մեղմացումներին, այդ տարիներին դեռևս նկատելի էր պետական հակակրոնական քաղաքականությունը, որն ազդում էր ավանդական-կրոնական տոների ու ծեսերի տարածման վրա[3]:

Այսպիսով, այդ տարիներին ավանդական տոները գրեթե անկում էին ապրել (բացառությամբ՝ Զատկի), հիմնականում տարածված էին խորհրդային տոները, որոնք գրեթե ամբողջությամբ առկա էին պետական տոնացույցում[4]:

---

[1] Այս բանաստեղծության մեջ գովերգվում են սովետական տիեզերագնացներ Գագարինը և Տիտովը.

Պար են բռնել, տես ահա,
Հայկը, Վաչեն և Նունեն,
Տոնածառին նոր տարվա
Ինչեր ասես որ չունեն:
Տոնածառ կա այնտեղ էլ,
Մանուկներ կան հրածին
Տիտով քեռին է տեսել,

Երազներ չեն սրանք սին (տե՛ս **Ս. Անտոնյան**, Նոր տարվա երգ, Փարոս, Կիրովական, 1963, N 1, հունվարի 1):

Նոր տարի, նոր հաջողություններ, Կարմիր զինվոր, Կիրովական, 1956: Խոսք ընթերցողին - Նոր տարի, Փարոս, Կիրովական, 1963, էջ 1: Խոհ տարեմուտի, Փարոս, Կիրովական, 1963, էջ 1:

[2] Մայիսի 1-ը, Կարմիր զինվոր, Կիրովական, 1956, էջ 1-2: Գարուն է, Մայիս, Փարոս, Կիրովական, 1963, N 7, մայիսի 1, էջ 1: ՍՄԿԿ Կենտկոմի մայիսմեկյան կոչեր, Փարոս, Կիրովական, 1963, էջ 2: Տոնական զեկույցներ, Փարոս, Կիրովական, 1963, N 7, մայիսի 1, էջ 2:

[3] **Համբարյան**, Կրոնը թույն է, Փարոս, Կիրովական, 1963, N 85, նոյեմբերի 1, էջ 2:

[4] ՍՍՀՄ Գերագույն Սովետի 1980թ. հոկտեմբերի 1-ի հրամանագրով ՀՍՍՀ-ի պետական տոներ էին՝ Նոր տարին, Կանանց միջազգային օրը /Մարտի 8/, Լենինի ծննդյան օրը, Աշխատավորների միջազգային համերաշխության օրը /Մայիսի 1/, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած Հաղթանակի օրը /-Մայիսի 9/, ՍՍՀՄ Սահմանադրության օրը /Հոկտեմբերի 7/, Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության օրը /Նոյեմբերի 7/, Հայաստանում Սովետական

Խորհրդային տոներից բավականին տարածված էր Հաղթանակի օրը (Մայիսի 9) /71,1 %, տե'ս աղյուսակ 1/, որը պատերազմի մասնակից հազարավոր կիրովականցիների մեծարման և զոհվածների1 ու անհետ կորածների հիշատակման ամենագլխավոր օրն էր: Վերջինս, ըստ էության, պարունակում էր հայկական ավանդական մեռելոցների որոշակի տարրեր: Պատահական չէ, որ այդ տոնի կապակցությամբ Կիրովականում կառուցվել են ամենատարբեր հուշարձաններ: Խոսքը վերաբերում է այնպիսի կոթողների, ինչպիսիք են՝ Հայրենական մեծ պատերազմում զոհված քիմիագործների հուշարձանը Շ. Ազնավուրի անվան զբոսայգում2, Կիրովականի զինվորական հոսպիտալում մահացած կարմիրբանակայինների եղբայրական գերեզմանը և տեղադրված հուշաքարը քաղաքի հին գերեզմանոցում3, 1967 թ. նոյեմբերին Կիրովականի գեղատեսիլ անտառափեշին վեր խոյացած՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձան-կոթողը4:

Պատերազմի ավարտից հետո Կիրովականում նոր իմաստ ստացան ռազմաճակատում հերոսի մահով ընկած հայրենակիցների հիշատակին կառուցված աղբյուր-հուշարձանները: Դրանցից առաջինը Ղշլաղում (Տավրոս թաղամաս) կառուցել է վարպետ Մեհրաբը՝ ճարտարապետ Տ.

կարգերի հաստատման օրը /Նոյեմբերի 29/ (տե՛ս **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 335):

[1] Այդ պատերազմում զոհվել են 2004 կիրովականցի (տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, էջ 115): 300-ից ավելի գուգարքցիներ են մասնակցել Մեծ հայրենականին, որոնցից 120-ից ավելին զովել են: Զոհվածների հիշատակը հավերժացնելու համար գյուղի կենտրոնում հուշահամալիր կառուցեցին: Դեռևս 1961թ. վարպետ Արամայիս Առաքելյանի կառուցած հուշաղբյուրը տեղափոխվեց նոր տարածք, ուր նոր հուշահամալիրում Մայիսի 9-ին տեղի ունեցավ հանդիսավոր բացման արարողություն: Հուշահամալիրը երիզող ժապավենը կտրեց զոհվածի այրի Գեղեցիկ Հարությունյանը: Դպրոցականների հայրենասիրական երգերի ու ասմունքի ներքո միջոցառման մասնակիցները թարմ ծաղիկներ դրեցին զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանին: Բանաստեղծ Սարմենը, տեսնելով գյուղի կենտրոնում կանգնեցված հուշաղբյուրը, հենց աղբյուրի մոտ գրել է "Հուշարձան» բանաստեղծություն (տե՛ս **Գ. Քարհանյան**, Գուգարք, էջ 329, 341-342):

[2] Վանաձոր. Պատկերազարդ պատմություն, էջ 112:

[3] Նշվ. աշխ., էջ 113:

[4] Քանդակագործ՝ Արա Սարգսյան, շինարարության պետ՝ Նիկոլայ Խաչատրյան:

Մարությանի նախագծով[1]: Հայտնի են նաև Խնձորուտի աղբյուր-հուշարձանը (կառուցվել է 1961թ.), “Ջուխտ ախպուրը» և այլն:

Խորհրդային վերջին շրջանում Կիրովականում տարածված էին նաև Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակման նվիրված արարողությունները: Շատ կիրովականցիներ այն նշում էին ոչ միայն Երևանի Ծիծեռնակաբերդում, այլև իրենց քաղաքում կառուցված Եղեռնի գոհերին նվիրված հուշակոթողի մոտ: Թուրքական յաթաղանից մազապուրծ արևմտահայերի շատ ընտանիքներ փրկության հանգրվան գտան այդ քաղաքում: Լոռեցիների կենցաղը հարստացավ մշեցու, կարսեցու, իգդիրցու, Արևմտյան Հայաստանի այլ գավառներից եկած հայորդիների ավանդույթներով, բառ ու բանով, մշակույթով[2]:

Կիրովականում 1980 թ. իրականացրած էթնոսոցիոլոգիական հետազոտություններն[3] ամբողջությամբ արտացոլում են բնակչության տոնական վարքագիծն ըստ ընդհանրական պատկերի և սեռային, տարիքային ու կրթական հատկանիշների (տե՛ս աղյուսակներ 1, 2, 3, 4):

---

[1] Ղշլաղի այդ աղբյուր-հուշարձանը կառուցվել է 1947 թ. և հանրապետությունում առաջիններից մեկն է: Աղբյուրը կառուցված է տեղական սրբատաշ քարից և ունի հայկական ավանդական աղբյուրներին բնորոշ ուղղանկյուն ձև, դիմային ճակատին կամարաձև հայկական զարդանախշեր են, իսկ վերևի եռանկյունաձև մասում հաղթանակի խորհրդանիշն է՝ հնգաձև աստղ՝ շրջափակված դափնեպսակով: Աստղի ներքևի մասում մակագրություն կա՝ “Հայրենիքի ազատության և անկախության համար զոհված համագյուղացիների հիշատակին: 1941-1945 թթ.»: Կողային ճակատներին սեպաձև որմնախորշեր են՝ զարդանախշերով: Տեղաբնակ, 85-ամյա Հակոբ Փափախչյանը հիշում է. «Աղբյուրը կառուցում էր վարպետ Մեհրաբը, մեղրուտցի (այժմ՝ Գուգարք) Ռուբեն Սաքանյանի հետ: Նրանց օգնում էր վարպետ Մեհրաբի տղան՝ Շավարշը, որը աշակերտում էր հորը»: Աղբյուր-հուշարձանի վրա չկա ճարտարապետի անունը: Բայց տեղաբնակները չեն մոռացել նաև նրան: Վլադիմիր Դարբինյանը հավաստում է. «Աղբյուր-հուշարձանը նախագծել է մեր համագյուղացի (ղշլաղեցի) Տիրան Հարությունի Մարությանը (տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ Պատմություն, էջ 115, 152-153):

[2] Նշվ. աշխ., էջ 103:

[3] ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Էթնոսոցիոլոգիայի բաժնի գիտարշավ, Կիրովական, 1980 թ.:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐՈՎԱ-ԿԱՆՈՒՄ

1980թ. %

1. Նոր տարի	96,4
2. Քրիստոսի ծնունդ և մկրտություն (Ջրօրհնեք)	8,2
3. Տեառնընդառաջ (Տրընդեզ)	8,2
4. Վարդանանց	5,2
5. Զատիկ	56,7
6. Համբարձում	6,2
7. Վարդավառ	17,0
8. Սուրբ Աստվածածնի վերափոխում	6,7
9. Խաչվերաց	8,2
10. Խորհրդային բանակի տոն (Փետրվարի 23)	74,7
11. Կանանց տոն (Մարտի 8)	88,7
12. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Ապրիլի 24)	53,1
13. Աշխատավորների օր (Մայիսի 1)	86,1
14. Հաղթանակի և խաղաղության տոն (Մայիսի 9)	71,1
15. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության օր (Նոյեմբերի 7)	86,1

Խորհրդային վերջին փուլում Կիրովականում տոների տարածվածությունն ուներ հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 2).

- Ամենատարածված տոնը Նոր տարին[1] էր (96,4 %):

[1] Չնայած երգիծական ուղղվածությանը, այստեղ հստակ երևում են այդ ավանդական տոնի որոշ տարրեր՝ հատկապես կապված շնորհավորական փոխայցելությունների և նվիրատվությունների տրանսֆորմացիայի հետ: Ուշագրավ է, որ այցելությունների գլխավոր օբյեկտը ոչ թե տանուտերն էր կամ քահանան (ինչպես անցյալում), այլ խորհրդային պաշտոնյան. “Դեկտեմբերի 31-ն էր: Սիմավոնի տունը կռիվ էր ընկել: Նա չէր ուզում ամանորյա այցելությունների գնալիս կոնյակ տանել, իսկ կինը չէր համաձայնվում: -Այ մարդ ադաթ է, հենց մենք պիտի վերացնե՞նք էդ ադաթը, հո չես կարող դատարկ ձեռքով մտնել օրինակ, դիրեկտորիդ տուն: -Դե լավ կնիկ, թող քո ասածը լինի, փաթեթները տուր գնամ: -Ահա, Սիմավոն ջան, դիրեկտորի բաժինը կարմիր թելով եմ կապել, տեղակալինը՝ կանաչ, արտադրամասի պետինը՝ կապույտ, գլխավոր հաշվապահինը՝ դեղին: Հիշիր, հանկարծ գույները չխառնես իրար: -Ուղիղ ժամը 12-ին Սիմավոնը մտավ դիրեկտորի տուն: Նախասենյակում շարված կոշիկների արանքում մի տեղ արեց ու գունավոր թելերով փաթեթները տեղավորեց, որ դուրս գալիս հեշտությամբ գտնի: Ներս մտավ շնորհավորեց: Մեկական բաժակ բարձրացրին ու դուրս ե-

- Եկեղեցական տոներից ամենատարածվածը Զատիկն էր (56,78 %) և մասամբ՝ Վարդավառը (17,0 %):
- Եկեղեցական տոներից ամենաքիչը նշվում էին Վարդանանցը (5,2 %), Համբարձումը (6,2 %), Սուրբ Աստվածածնի վերափոխումը (6,7 %), Քրիստոսի Ծնունդը (8,2 %), Խաչվերացը (8,2 %) և Տեառնընդառաջը (8,2 %):
- Առավել տարածված էին խորհրդային տոները՝ հետևյալ հաջորդականությամբ. Կանանց տոն (Մարտի 8) - 88,7 %, Աշխատավորների օր (Մայիսի 1) - 86,1 %, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության օր (Նոյեմբերի 7) - 86,1 %, Խորհրդային բանակի տոն (Փետրվարի 23) - 74,7 %, Հաղթանակի տոն (Մայիսի 9) - 71,1 %:
- 1980-ականներին խորհրդային տոների միջին տարածվածությունը կազմում էր 81,3 %, իսկ եկեղեցականը՝ 14,51 %:
- Ցեղասպանության զոհերի հիշատակման օրվա մասնակիցները կազմում էին 53,1 %, որը մեծ ցուցանիշ էր խորհրդային մերժողականության պայմաններում:

Խորհրդային տոների տարածումը մեծ մասամբ պայմանավորված էր կենցաղում դրանց իմաստային փոխակերպումներով: Օրինակ՝ Մարտի 8-ը, Փետրվարի 23-ը, Մայիսի 1-ը և այլ տոները հետագայում մուտք գործեցին ընտանեկան միջավայր, որը պայմանավորված էր դրանց տրանսֆորմացիայով և ոչ թե՝ սոցիալիստական գաղափարախոսությամբ:

ԱՂՅՈՒՍԱԿ 2
ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿԻՐՈՎԱԿԱՆՑԻ
ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ 1980թ. %

	Կին	տղամարդ
1. Նոր տարի	51,3	48,7
2. Քրիստոսի Ծնունդ և մկրտություն (Զրօրհնեք)	43,8	56,3
3. Տեառնընդառաջ (Տրընդեզ)	37,5	62,5
4. Վարդանանց	30,0	70,0

կավ: Նախասենյակում վերարկուն հագավ, ցանկացավ կոշիկների արանքից վերցնել փաթեթները, բայց դրանք չկային: -Այ քեզ բան, երևի կարծել են սա էլ եմ իրենց համար, վերցրել են, բա հիմա ի՞նչ անեմ, ի՞նչ պատասխան տամ կնոջս» (տե՛ս Ամանորի ժպիտներ, Փարոս, Կիրովական, 1977, հունվարի 1, էջ 4):

5. Զատիկ	50,0	50,0
6. Համբարձում	66,7	33,3
7. Վարդավառ	42,4	57,6
8. Սուրբ Աստվածածնի վերափոխում	38,5	61,5
9. Խաչվերաց	56,3	43,8
10 Խորհրդային բանակի տոն (Փետրվարի 23)	46,9	53,1
11. Կանանց տոն (Մարտի 8)	50,6	49,4
12. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Ապրիլի 24)	47,6	52,4
13. Աշխատավորների օր (Մայիսի 1)	49,7	50,3
14. Հաղթանակի և խաղաղության տոն (Մայիսի 9)	48,6	51,4
15. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության օր (Նոյեմբերի 7)	49,7	50,3

Կիրովականցի կանանց և տղամարդկանց շրջանում տոների տարածումն ուներ հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 2).

- Եկեղեցական տոներից առավել տարածված Զատիկը (56,7 %) հավասարաչափ էր կենցաղավարում կանանց և տղամարդկանց շրջանում (50 %-50 %): Վարդավառը, որի տարածման մասշտաբները համեմատաբար նվազ էին (17,0 %), առավել կենցաղավարում էր տղամարդկանց շրջանում (կին՝ 42,4 %- տղամարդ՝ 57,6 %):
- Եկեղեցական տոներից Քրիստոսի Ծնունդը, Տեառնընդառաջը, Վարդանանցը և Սուրբ Աստվածածնի վերափոխումը, չնայած տարածման շատ ցածր մասշտաբներին, առավել տարածված էին տղամարդկանց միջավայրում: Այս համատեքստում միայն Համբարձման և Խաչվերացին նվիրված տոներն էին, որոնք գերակայում էին կանանց շրջանում:
- Ավանդական տոներից գրեթե հավասարաչափ էր տարածված Նոր տարին՝ կանանց թեթևակի առավելությամբ (կին՝ 51,3 %- տղամարդ՝ 48,7 %):
- Խորհրդային տոները ընդհանուր առմամբ հավասարաչափ էր տարածված՝ տղամարդկանց շատ մասնակի առավելությամբ:
- Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը ևս հավասարաչափ էր նշվում՝ դարձյալ տղամարդկանց մասնակի առավելությամբ (կին՝ 47,6 % - տղամարդ՝ 52,4 %):

ԱՂՅՈՒՍԱԿ 3
ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐՈՎԱ-ԿԱՆՑԻՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ (1980թ.) %

	18-29	30-49	50 և բարձր
1. Նոր տարի	34,2	41,7	24,1
2. Քրիստոսի Ծնունդ և մկրտություն (Զրօրհնեք)	18,8	31,3	50,0
3. Տեառնընդառաջ (Տրընդեզ)	18,8	43,8	37,5
4. Վարդանանց	10,0	40,0	50,0
5. Զատիկ	36,4	42,7	20,9
6. Համբարձում	25,0	16,7	58,3
7. Վարդավառ	39,4	21,2	39,4
8. Սուրբ Աստվածածնի վերափոխում	7,7	61,5	30,8
9. Խաչվերաց	12,5	31,3	56,3
10.Խորհրդային բանակի տոն (Փետրվարի 23)	36,6	42,8	20,7
11. Կանանց տոն (Մարտի 8)	34,9	43,0	22,1
12. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Ապրիլի 24)	35,0	42,7	22,3
13. Աշխատավորների օր (Մայիսի 1)	35,9	41,9	22,2
14. Հաղթանակի և խաղաղության տոն (Մայիսի 9)	36,2	42,8	21,0
15. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության օր (Նոյեմբերի 7)	34,1	42,5	23,4

Կիրովականցիների տոնական վարքագիծն ըստ տարիքային խմբերի ուներ հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 3).

- Եկեղեցական տոներից ամենատարածվածը՝ Զատիկը (56,7 %), առավել տարածված էր երիտասարդ (36,4 %) և հատկապես՝ միջին (42,7 %) տարիքային խմբերում:
- Զատկի և մասամբ Վարդավառի մեծ տարածումը երիտասարդության շրջանում հիմնականում պայմանավորված էր կենցաղում դրանց առավել խաղային բնույթով:
- Եկեղեցական տոներից տարածման երկրորդ վարկանիշն ունեցող Վարդավառը (17,0 %) տարեց խմբի հետ միասին ամենաբարձր կենցաղավարումն ուներ երիտասարդների շրջանում (39,4 %), որը դարձյալ պայմանավորված է միջսերնդային ժառանգորդությամբ:

- Եկեղեցական մյուս բոլոր տոները (Քրիստոսի ծնունդ, Տեառնընդառաջ, Վարդանանց, Սուրբ Աստվածածնի վերափոխում, Խաչվերաց), չնայած դրանց տարածման շատ նեղ մասշտաբներին, ամենացածր կենցաղավարումն ունեին երիտասարդների և ամենաբարձրը՝ տարեցների և մասամբ միջին սերդի միջավայրում, որը պայմանավորված էր նրանց պահպանողական վաքագծով:
- Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրը համեմատաբար բարձր է միջին սերնդի (42,7 %) և երիտասարդության (35,0 %) շրջանում:
- Խորհրդային տոների ամենաակտիվ մասնակիցները միջին և երիտասարդ սերունդների ներկայացուցիչներն են: Այս հանգամանքը պայմանավորված էր խորհրդային համակարգի կրթական դաստիարակությամբ, ինչպես նաև կենցաղում առանձին տոների (օրինակ՝ Կանանց տոն, Խորհրդային բանակի տոն, Աշխատավորների օր) իմաստային տրանսֆորմացիայով:

ԱՂՅՈՒՍԱԿ 4
ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ
ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ (1980 թ.) %

	Մինչև 8-րդ	8 ամյա	Միջնա կարգ	Միջին մասնա գիտ.	Թերի բարձրագույն	Բարձրագույն
1. Նոր տարի	11,2	10,7	27,8	25,7	11,2	13,2
2. Քրիստոսի Ծնունդ և մկրտություն (Ջրօրհնեք)	43,8	25,0	6,3	12,5	0,0	12,5
3. Տեառնընդառաջ (Տրընդեզ)	18,8	6,3	25,0	25,0	12,5	12,5
4. Վարդանանց	30,0	10,0	30,0	20,0	0,0	10,0
5. Զատիկ	13,6	11,8	31,8	21,8	7,3	13,6
6. Համբարձում	33,3	0,0 %	25,0	16,7	0,0	25,0
7. Վարդավառ	30,3	12,1	21,2	21,2	9,1	6,1
8. Սուրբ Աստվածածնի վերափոխում	38,5	23,1	15,4	15,4	0,0	7,7
9. Խաչվերաց	37,5	12,5	18,8	12,5	0,0	18,8
10. Խորհրդային բանակի տոն (Փետրվարի 23)	7,6	9,7	28,3	26,9	11,7	15,9

11. Կանանց տոն (Մարտի 8)	9,3	9,9	28,5	26,7	12,2	13,4
12. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Ապրիլի 24)	12,6	6,8	27,2	28,2	10,7	14,6
13. Աշխատանքի օր (Մայիսի 1)	9,6	10,8	28,1	25,1	12,6	13,8
14. Հաղթանակի տոն (Մայիսի 9)	9,4	10,1	31,9	25,4	7,2	15,9
15. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության օր (Նոյեմբերի 7)	9,0	10,8	27,5	26,3	12,6	13,8

Կիրովականցիների տոնական վարքագիծն ըստ կրթական մակարդակների ուներ հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 4).

- Խորհրդային շրջանում կար հետևյալ օրինաչափությունը՝ որքան բարձր էր կրթական մակարդակն, այնքան ցածր էր եկեղեցական տոների տարածումը: Չնայած իրենց տարածման փոքր մասշտաբներին, դա վերաբերում է կրոնա-ավանդական տոների մեծամասնությանը (Քրիստոսի ծնունդ, Համբարձում, Վարդավառ, Ս. Աստվածածնի վերափոխում, Խաչվերաց):
- Կրոնական տոներից ամենատարածված Զատիկը հիմնականում տարածված էր միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում: Վարդավառը ևս բավականին բարձր վարկանիշ ուներ կրթական այդ խմբերում: Նույնը վերաբերում է նաև Տրընդեզին, Վարդանանցին, Ս. Աստվածածնի վերափոխմանը և Խաչվերացին:
- Խորհրդային տոների հիմնական նշողներն ունեին կրթական բարձր մակարդակ, ուր հատկապես առանձնանում էին միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ստացածները:
- Մասնակի բացառություններով թե՛ ավանդական և թե՛ խորհրդային տոների ամենաակտիվ մասնակիցները միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողներն են, որոնք, ըստ էության, հին և նոր ավանդույթների կապող կրթական օղակներն էին:
- Կրոնական տոների անկման և խորհրդային տոների տարածման հակընթաց միտումները պայմանավորված էին այդ պետության կրթական դաստիարակությամբ:
- Ապրիլի 24-ը նշողների հիմնական խմբերը՝ միջնակարգ (27,2 %) և միջին մասնագիտական (28,2 %) խմբերն էին, չնայած որոշակի միտում նկատվում էր նաև բարձրագույն կրթություն ստացածների շր-

ջանում (25, 3 %):

- Բարեկամական-ազգակցական փոխայցելությունների համատեքստում գերակայում էին ընտանեկան տոները կամ հանդիսությունները (48,8 %, տե՛ս աղյուսակ 5):

ԱՂՅՈՒՍԱԿ 5
ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՑԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
1980 թ.

	Ընդամենը		Պատասխանածի %
	Քանակ	%	
Օգնելու տնտեսության մեջ, հիվանդության դեպքում, երբ նրանց անհրաժեշտ եմ	88	30,78	47,1
Տոների, ընտանեկան հանդեսների դեպքում	140	48,8	74,9
Խորհրդակցելու, երբ նրանց կարիքն եմ զգում	59	20,6	31,6
Ընդամենը	287	100,0	153,5

Այսպիսով, եկեղեցական տոների անկման և խորհրդային տոների տարածման հակընթաց միտումները պայմանավորված էին այդ պետության հակակրոնական քաղաքականությամբ, սերունդների շրջանում խորհրդային գաղափարախոսության պրոպագանդայով, չգործող եկեղեցիների առկայությամբ, կրթական դաստիարակությամբ, սոցիալ-մասնագիտական առաջընթացի մոտիվացիայով և այլն:

Բանալի բառեր *- Կիրովական, տոն, ծես, վարք, սովետական, ավանդական, կրոնական, եկեղեցական, հակակրոնական*

ИЗМЕНЕНИЯ В ПРАЗДНИЧНОМ ПОВЕДЕНИИ КИРОВАКАНЦЕВ В СОВЕТСКИЙ ПЕРИОД

Самвел Мкртчян

Ключевые слова *- Кировакан, праздник, обряд, поведение, советский, традиционный, религиозный, церковный, антирелигиозный*

В первые десятилетия советской власти в среде кироваканцев кардинально изменились масштабы распространения традиционных праздников, которые были обусловлены государственной политикой. В итоге параллельно с сокращением количества этих праздников в быт горожан проникли праздники советского и международного революционного характера. Этот период отличался подчеркнутой антирелигиозной политикой, главной мишенью которой были церковные праздники и обряды. Организаторами этой политики в основном стали республиканские и, в частности, местные организации "Безбожников" Каракилиса. Во время Второй мировой войны и в послевоенный период, несмотря на отрицательную позицию госорганов, наблюдается перепробуждение паломничества и обряд жертвоприношения, что было обусловлено тяжелой военно-политической ситуацией. Тревога за судьбу солдата, отправившегося на фронт, стала главным вопросом для его родных. Традиционные ритуалы возродились у оставшихся в тылу и особенно среди женщин. Посредством паломничества и жертвоприношений кироваканцы оплакивали погибших и молились за родных и пропавших без вести на фронте. В 1970-е и 1980-е годы в Кировакане наметилась определенная тенденция к «возрождению» традиционных праздников. Эти праздники сопровождались спортивно-музыкальными мероприятиями и театрализованными представлениями организованными по специальным сценариям, которые инициировались и зачастую исполнялись государственными учреждениями. В этом отношении выделялись праздники Амбарцум и Вардавар. Появились новые праздники (праздник Песни, Лорийская зима, Праздник подснежников). В последний советский период число традиционных праздников значительно сократилось (за исключением Пасхи), и в основном преобладали советские праздники, которые практически полностью присутствовали в государственном календаре. Этносоциологические исследования, осуществленные в 1980г., полностью отражают праздничное поведение кироваканцев по гендерным, возрастным и образовательным признакам.

CHANGES IN THE HOLIDAY BEHAVIOR OF THE PEOPLE OF KIROVAKAN IN THE SOVIET PERIOD

Samvel Mkrthcyan

Key words *- Kirovakan, holiday, ritual, behavior, soviet, traditional, religious, ecclesiastical, anti-religious*

In the early Soviet period the scale of the expansion of traditional holidays among the people of Kirovakan changed radically, which was associated with the state politics. As a result, Soviet and international revolutionary holidays have been penetrated in the life parallel with the decline of those holidays. This region was marked by the strong anti-religious politics, the main target of which were church holidays and rituals. The organizers of that politics were mainly republicans, particularly, the local "Godless" organizations.During the post –World War II and post-war period, despite the state rejection, there was a certain resurgence of pilgrimage and rituals, which was conditioned by a very difficult military situation. The fate of the fighter who went to the front became the main concern of his relatives. Traditional rituals were revived in the back, especially among women. Through pilgrimages and oblations, the mourners mourned the dead, prayed for the lost relatives in war. This phenomenon was typical for other places in Lori as well.

In the 1970s and 1980s there was a certain tendency for "revival" of traditional holidays in Kirovakan. Those holidays were sports-musical events and theatrical performances organized by special scenarios, which were initiated and often performed by state institutions. Especially, Feast of the Ascension of Jesus Christ and Vardavar holidays. New holidays had been appeared (Song Festival, Lori Winter, Snowdrop Festival), which were connected with the beautiful nature of Lori. In the last Soviet period, the traditional holidays were almost in decline (except for Easter) and were mainly prevailed the Soviet holidays, which were almost entirely present in the state calendar. The ethno sociological research conducted in 1980 fully reflects the festive behavior of the people of Kirovakan according to gender, age and educational characteristics.

Սամվել Մկրտչյան *- պատմ. գիտ. դոկտ., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնների պատմության և տեսության ամբիոնի վարիչ*

Самвел Мкртчян *- докт. истор. наук, заведующий кафедрой Истории и теории религии ЕГУ Факультета Богословия*

Samvel Mkrtchyan *- PhD in History, Head of chair of History and Theory of Religions at the YSU Faculty of Theology*